


Հաստատված է  
«Ակադեմիական փոխճանաչման և շարժունության  
ազգային տեղեկատվական կենտրոն» հիմնադրամի  
Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝  
Մհեր Ղազարյան

  
\_\_\_\_\_

“ 23 ” հունիս/թիվ 2015թ.

2014թ. Տարեկան հաշվետվություն

Ճանաչումը հանդիսանում է Բոլոնիայի գործընթացի հիմնահարցերից մեկը, ինչպես նաև տվյալ երկրում իրականացվող բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումների գործընթացի գնահատման չափանիշ:

Վերջին երկու տասնամյակների ընթացքում կրթության ոլորտում գործող միջազգային կառույցների կողմից՝ մշակվել են ճանաչումը խթանող մի շարք գործիքներ, որոնք ներդրվել են եվրոպական, ազգային և ինստիտուցիոնալ մակարդակներում: Այդ գործիքների թվում են Լիսաբոնի ճանաչման կոնվենցիան և նրա երաշխավորությունները, ԷՆԻԿ-ՆԱՐԻԿ<sup>2</sup> միջազգային ցանցը, կրեդիտիների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգը (ECTS), դիպլոմի միասնական հավելվածը (Diploma Supplement), որակավորումների ազգային շրջանակները և այլն: Չնայած ճանաչման ոլորտում գրանցված ակնառու ձեռքբերումներին՝ դեռևս գոյություն ունեն խնդիրներ, որոնք խաթարում են անհատի որակավորումների ճանաչման գործընթացը: Վերլուծությունները<sup>3</sup> ցույց են տալիս, որ այդ խնդիրները կապված են՝

- ազգային կրթական համակարգերի բազմազանության,
- Լիսաբոնի ճանաչման կոնվենցիայի ոչ լրիվ ներդրմանը ազգային մակարդակում,
- Ազգային և միջազգային օրենսդրությունների միջև առկա անհամապատասխանությունները,
- Ուսումնառության վերջնարդյունքների ընկալման և դրանց ներդրման տարբերությունները,
- Բոլոնիայի եռաստիճան համակարգից դուրս գոյություն ունեցող կրթական ծրագրերը,
- դոկտորական ծրագրերի բազմազանության և այլն:

Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնը (ԱՓՇԱՏԿ)<sup>4</sup> հայկական ԷՆԻԿ-ը (ENIC - European Network of Information Centers) տրամադրում է որակավորումների ճանաչման և խորհրդատվական ծառայություններ, որոնք ուղղված են ուսումնական հաստատություններին, պետական մարմիններին, անհատներին, գործատուներին և բոլոր այն շահառուներին, ովքեր ցանկանում են տեղեկանալ ազգային և այլ երկրների կրթական համակարգերի, նրանցում շնորհվող որակավորումների, որակավորումների ազգային շրջանակների, նախկին փորձառության ճանաչման և համատեղ աստիճանների վերաբերյալ:

Սույն հաշվետվությունը բաղկացած է 2 մասից՝ ներառելով Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնի և Բոլոնիայի

<sup>1</sup> Եվրոպական հանձնաժողով, ՅՈՒՆԵՍԿՕ, Եվրախորհուրդ

<sup>2</sup> [www.enic-naric.net](http://www.enic-naric.net)

<sup>3</sup> 2012 EHEA Implementation Report

<sup>4</sup> [www.armenic.am](http://www.armenic.am)

քարտուղարության<sup>5</sup> կողմից 2014թ.-ի ընթացքում իրականացված հիմնական աշխատանքները:

## **ՄԱՍ 1. Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկարկական կենտրոն**

### **1. Օտարերկրյա որակավորումների ճանաչում, խորհրդատվական տեղեկանքի տրամադրում**

2014թ.-ին ԱՓՇԱՏԿ-ը շարունակել է ընդլայնել գործընկերների շրջանակը և համագործակցությունները ինչպես նաև մշակել նոր ծրագրեր: Կազմակերպվել են տարբեր հանդիպումներ միջազգային և տեղական կառույցների հետ՝ կրթական ոլորտում խորհրդատվություն և աջակցություն տրամադրելու նպատակով: Հանդիպումների ընթացքում քննարկվել են տարբեր երկրների կրթական համակարգերի առանձնահատկությունները, ՀՀ կրթական օրենսդրությունը և ճանաչման հարցերը, մասնավորապես՝ նախկին ուսումնառության ճանաչման և նախկին փորձառության գնահատման հիմնախնդիրները, ՀՀ որակավորումների ազգային շրջանակը, և այլն:

Համաձայն ԱՓՇԱՏԿ-ի և ԱՄՆ դեսպանության միջև դեռևս 2011թ.-ին ձեռք բերված երկկողմ պայմանավորվածության՝ ԱՓՇԱՏԿ-ը 2014թ.-ին նույնպես տրամադրել է անգլերեն լեզվով խորհրդատվական տեղեկանքներ ՀՀ քաղաքացիներին, որոնք շահել են գրին քարտ և պատրաստվում են մեկնել ԱՄՆ: Հետաքրքրական է, որ տեղեկանքները հիմնականում տրամադրվում են միջին մասնագիտական որակավորումների վերաբերյալ:

2014թ.-ին ԱՓՇԱՏԿ-ի և Վրաստանի Կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (National Center for Educational Quality Enhancement) միջև համագործակցությունը հատկապես ակտիվացել է:

Ամփոփելով 2014թ. ընթացքում կատարված աշխատանքները՝ կարելի է արձանագրել հետևյալ թվային ցուցանիշները.

- ուսումնասիրված գործերի ընդհանուր քանակը կազմել է 1498, որը նախորդ տարվա համեմատությամբ (510) աճել է մոտ 194%-ով (տե՛ս դիագրամ 1),
- տրամադրված խորհրդատվական տեղեկանքների քանակը նախորդ տարվա համեմատությամբ կրճատվել է 25%-ով՝ կազմելով 124 գործ:
- ճանաչման վերաբերյալ որոշում է կայացվել 18 օտարերկրյա որակավորումների մասին: Նշենք, որ նախկինում զգալի տեսակարար կշիռ էին կազմում Իրանի Իսլամական Հանրապետությունում շնորհված որակավորումների վերաբերյալ

<sup>5</sup> 01.05.2013թ. համաձայն ՀՀ Կրթության և գիտության նախարարության որոշման Բոլոնիայի քարտուղարությունը ներառվեց ԱՓՇԱՏԿ հիմնադրամի կազմում:

տրամադրված ճանաչման տեղեկանքները: Այս ցուցանիշի անկումը մեծապես կախված է Իրանից եկող ուսանողների թվի կտրուկ կրճատմամբ՝ ելնելով Իրանի ներքաղաքական վիճակից: Առկա են նաև խնդիրներ Իրանում հայկական որակավորումների ճանաչման հետ, մասնավորապես բժշկական և իրավագիտական մասնագիտություններով:

- տրամադրվել է 1356 տեղեկատվություն տեղական և միջազգային շահառուներին, որի գերակշիռ մասը կազմում է Վրաստանին տրամադրված տեղեկատվությունը (մոտ 1000)
- ընդլայնվել է օտարերկրյա համագործակցությունների «աշխարհագրությունը», որը տոկոսային հարաբերակցությամբ ներկայացված է դիագրամ 2-ում:
- տարվա ընթացքում բացահայտվել են կրթական փաստաթղթերի կեղծման միայն 10 դեպք (7 Հայաստանի Հանրապետություն, 3 Ռուսաստանի Դաշնություն), որոնց վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է ԿԳ նախարարություն:

Հաշվետվությանը կից ներկայացված է ԱՓՇԱՏԿ-ի կողմից 2014 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերլուծությունը ( տես դիագրամ 1 և 2):

ԱՓՇԱՏԿ-ի գործունեության շնորհիվ զգալի բարձրացրել է իրազեկվածությունը ՀՀ և օտարերկրյա բարձրագույն կրթական համակարգերի և ազգային որակավորումների վերաբերյալ: ԱՓՇԱՏԿ-ի ինտերնետային կայքում զետեղված է տեղեկատվություն ճանաչման գործընթացների և ազգային կրթական համակարգի և շնորհվող որակավորումների, ինչպես նաև Բոլոնիայի գործընթացի վերաբերյալ: Հաշվետու տարվա ընթացքում կայքը ունեցել է շուրջ 17000 դիտում:

Կենտրոնը խորհրդատվություն է տրամադրում ոչ միայն տեղեկանքի տեսքով այլ նաև հեռախոսով, էլեկտրոնային փոստով կամ անհատական այցելություններով կազմակերպություն դիմած անհատներին:

Հաշվետու տարվա ընթացքում հիմնադրամի աշխատակազմը համալրվել է ևս մեկ գնահատման մասնագետով:

## **2. Տեղեկատվության տրամադրում շահառուներին և գործընկերներին**

2014թ. ընթացքում ԱՓՇԱՏԿ-ը շարունակել է ակտիվորեն համագործակցել որակավորումների ճանաչման համար պատասխանատու արտասահմանյան մարմինների հետ, ԷՆԻԿ-ՆԱՐԻԿ (ENIC-NARIC) միջազգային ցանցի գործընկերների, տարբեր Եվրոպական երկրների որակի հավաստման գործակալությունների, Եվրոպական վիճակագրական վարչության և միջազգային ուսումնական հաստատությունների հետ՝ տրամադրելով անհրաժեշտ տեղեկատվությունը ՀՀ կրթական համակարգի, որակավորումների ազգային շրջանակի և այլ որակավորումների վերաբերյալ:

Համագործակցությունը շարունակվել է նաև ԱՓՇԱՏԿ-ի մշտական գործընկերների՝ Համաաշխարհային կրթական ծառայության (World Education Services),

Կրթության հետազոտությունների միջազգային հիմնադրամի (International Education Research Foundation) և մի շարք այլ կազմակերպությունների հետ, որոնք իրականացնում են օտարերկրյա որակավորումների ճանաչումը իրենց երկրներում: 2014 թվականի ընթացքում ակտիվ համագործակցություն է ծավալվել Ռուսաստանի Դաշնության Կրթության գնահատման գլխավոր պետական փորձագիտական կենտրոնի (Главэкспертцентр) և Վրաստանի Կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (National Center for Educational Quality Enhancement) հետ: Կապված Վրաստանում օրենսդրական փոփոխությունների հետ, 2014թ-ին համագործակցության հիմնական ուղղությունը միտված էր կանոնակարգվող մասնագիտություններին՝ հատկապես մանկավարժների որակավորման ճանաչմանը, ինչը հանգեցրեց մեծ թվով մանկավարժների դիպլոմների ստուգմանը՝ շուրջ 1000 կրթական փաստաթուղթ:

Կենտրոնը ակտիվ մասնակցում է ԷՆԻԿ/ՆԱՐԻԿ (ENIC-NARIC) միջազգային ցանցի էլեկտրոնային քննարկումներին՝ որակավորումների ճանաչման, դրանց միջև եղած էական տարբերությունների, համատեղ աստիճանների, տրանսազգային ուսումնական հաստատությունների կողմից շնորհված որակավորումների ճանաչման և մի շարք այլ հարցերի շուրջ, որը փորձի փոխանակման լայն հնարավորություն է ընձեռել:

### **3. Միջազգային համատեղ ծրագրերի իրականացում**

Կենտրոնը ակտիվորեն մասնակցել է տարբեր միջազգային հանդիպումների և համաժողովներին: ԱՓՇԱՏԿ-ը ընգրկված է ՏԵՄՊՈՒՍ-ի «ԱՐՄԵՆՔԱ - Հայաստանում ազգային և սեկտորիալ որակավորումների շրջանակի իրագործում» ծրագրում (Implementation of National and Sectorial Qualifications Frameworks in Armenia-Tempus “ARMENQA” project): «ԱՐՄԵՆՔԱ» նախագիծը եռամյա ազգային ծրագիր է (2014-2016թթ.), որն ուղղված է Հայաստանում որակավորումների ազգային և սեկտորիալ շրջանակների ներդրմանը, որակավորումների ճանաչմանը ազգային և միջազգային աշխատաշուկայում:

Ծրագրին մասնակցում են Հայաստանի 15 հաստատություններ (բուհեր և սոցիալական գործընկերներ) և 5 եվրոպական հաստատություններ: Ծրագրի շրջանակներում արդեն իսկ տեղի են ունեցել 3 հանդիպումներ արտերկրում (Շվեդիայի Լինչոփինգ քաղաք, Դանիայի Օրիուս քաղաք, Գերմանիայի՝ Օսնաբրուք քաղաք), այդ թվում մեկ սեմինար և համակարգող հանդիպումներ: Հունիսի 24-25-ը Երևանի պետական համալսարանում տեղի է ունեցել «ՀՀ Բարձրագույն Կրթության Որակավորումների Ազգային Շրջանակի հիմնախնդիրները» խորագրով աշխատաժողովը:

Ծրագրի շրջանակում աշխատանքները կշարունակվեն առաջիկա երկու տարում:

#### **4. Որակավորումների ճանաչման միջազգային միտումներ**

Որակավորումների ճանաչման միջազգային միտումներին ծանոթանալու նպատակով ԱՓՇԱՏԿ-ի 2 աշխատակից մասնակցել են բարձրագույն ուսումնական հաստատությունների ճանաչման Եվրոպական տարածաշրջանի ձեռնարկին (The European Recognition Manual for Higher Education Institutions) նվիրված դասընթացին, որն իրականացվել է ԷՆԻԿ-ՆԱՐԻԿ ցանցի 21-րդ տարեկան համաժողովի շրջանակներում: Դասընթացը հնարավորություն ընձեռնել գնահատման մասնագետներին ծանոթանալու ձեռնարկին, դրա օգտագործման ընդացքում առաջացած խնդիրներին և հնարավոր լուծումներին, որոնք հիմնված են այլ երկրների լավագույն փորձառության վրա:

2011թ.-ից ի վեր ՀՀ-ը և մասնավորապես ԱՓՇԱՏԿ-ը մասնակցում են «Ասիայի և խաղաղօվկիանոսյան երկրներում բարձրագույն կրթության որակավորումների ճանաչման տարածաշրջանային կոնվենցիա»-ի, (Տոկիոյի կոնվենցիա) ներդրմանը ուղղված աշխատանքներին: ՅՈՒՆԵՍԿՈ-ի հրավերքով օգոստոսին կենտրոնի տնօրենը մասնակցել է Կոլումբոյում (Շրի Լանկա) տեղի ունեցած համաժողովին ներկայացնելով Եվրոպական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգը:

#### **5. Բոլոնիայի գործընթաց**

2014թ.-ի ընթացքում ԱՓՇԱՏԿ-ը շարունակել է իր ակտիվ մասնակցությունը Բոլոնիայի գործընթացին և դրա շրջանակներում անցկացվող միջոցառումներին: Կենտրոնը ներառված է 2012-2015 Բոլոնիայի գործընթացին հետամուտ խմբի (ԲԳՀԽ) աշխատանքներին՝ մասնավորապես «Ազգային ՈԱՇ-ի համացանցի աշխատանքային խմբում (Working Group on National Correspondents for Qualifications Frameworks):

Հիմնադրամը մասնակցել է նաև մի շարք միջազգային հանդիպումների, համաժողովների և աշխատանքային քննարկումների:

#### ***ՄԱՍ II. Բոլոնիայի քարտուղարություն***

2012թ. ապրիլին Բուխարեստում կայացած նախարարական գագաթաժողովում Հայաստանը ընտրվեց որպես հաջորդ 2015թ. նախարարական գագաթաժողովը և 4-րդ Քաղաքական ֆորումը հյուրընկալող երկիր:

Բոլոնիայի քարտուղարության գործառույթներն ու պարտականություններն ամրագրված են Բոլոնիայի գործընթացին հետամուտ խմբի (ԲԳՀԽ) կողմից հաստատված տեխնիկական առաջադրանքում (ToR): 2014թ. քարտուղարությունը շարունակել է իր հիմնական գործառույթները, որոնք ներառում են ԲԳՀԽ-ի նրա խորհրդի և աշխատանքային խմբերի (ԱԽ) հանդիպումների համար անհրաժեշտ փաստաթղթերի մշակում, մասնակցություն հանդիպումներին, հաշվետվությունների

պատրաստում, ինչպես նաև ընթացիկ աշխատանքների արդյունավետ համակարգում: Քարտուղարությունը՝ ՀՀ ԿԳ նախարարության հետ համատեղ իրականացրել է 2015թ. նախարարական գագաթաժողովի նախապատրաստական աշխատանքները:

Բոլոնիայի քարտուղարության անձնակազմը մասնակցել է հետևյալ հանդիպումներին.

Աշխատանքային բաղադրիչի անվանում	քանակ (հատ)
ԲԳՀԽ	3
ԲԳՀԽ խորհուրդ	2
Կառուցվածքային բարեփոխումներ ԱԽ	4
Բոլոնիայի գործընթացի իրականացման ԱԽ	2
Սոցիալական ուղղվածություն և շարունակական կրթության ԱԽ	3
Շարժունության և միջազգայնացման ԱԽ	2
Երրորդ աստիճան ( դոկտորական )ԱԽ	2
Որակավորումների ազգային շրջանակների համացանց	2
Կրեդիտների կուտակման և փոխանցման Եվրոպական համակարգի (ECTS) վերանայման ԱԽ	2
Ուսանողների աջակցման փորձագետների համացանց	3
Նախնկին ուսուցման ճանաչման համացանց	2
Որակի հավաստման Եվրոպական ռեզիստր	2

Բոլոնիայի քարտուղարությունը իր գործառույթների շրջանակներում մասնակցություն է ցուցաբերել 2014թ. տեղի ունեցած համաժողովներին և սեմինարներին (թվով 14)<sup>6</sup> ներկայացնելով 2012-2015թթ. հիմնական առաջնայնություններն ու մարտահրավերները<sup>6</sup>: Աշխատանքային խմբերը նշված տարում աշխատել են իրենց հաշվետվությունների և նրանցում ներառված երաշխավորությունների վրա:

Իտալիա-Վատիկանի համանախագահության ընթացքում տեղի են ունեցել ԲԳՀԽ երկու հանդիպում (սեպտեմբեր 18-19 և նոյեմբեր 27-28 ) և մեկ խորհրդի հանդիպում: Հատկանշական է, որ հիմնական օրակարգային հարցերից մեկը վերաբերվում է Բոլոնիայի գործընթացի ապագաի հիմնախնհիրներին: Քննարկվել է նաև գործընթացի արդյունավետ կառավարման ձևերը և քարտուղարության երկարաժամկետ գուրծունեության հնարավորությունը:

<sup>6</sup> /<http://www.ehea.info/article-details.aspx?ArticleId=189/>

2014թ. ամփոփվել է նաև Երևանում 2015թ. կայանալիք նախարարական գագաթաժողովի կազմակերպման համար կատարված նախապատրաստական աշխատանքների առումով: Հայաստանը վերջնական համաձայնության է եկել ԲԳՀԽ-ի հետ Քաղականության ֆորումի մասնակիցների կազմի վերաբերյալ: Որոշվել է, որ այն կներառի Բոլոնիայի հարևանության և Միջերկրակական ծովի երկրները: Մշակվել է նաև համաժողովի համակարգը և կայքը: Նախատեսվում է, որ համաժողովի մասնակիցների թիվը կլինի մոտավորապես 550 հոգի: